Հայտարարություն 20.05. 2020թ.

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Կոտայքի մարզի «Գեղարդի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿի ռուսաց լեզվի (14 դասաժամ), ֆրանսերենի (11), կերպարվեստի (5), տեխնոլոգիայի (6), ֆիզկուլտուրայի (9) ուսուցչի, զինղեկ(0.5 դրույք) թափուր տեղերի համար: Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման: Մրցույթի մասնակիցների գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր եւ բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի: Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝ 1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հա- վակնում է (Ձեւ 1), 2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1- ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ, 3. Անձնագրի պատճենը, 4. Ինքնակենսագրություն (Ձեւ 4), 5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին եւ աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում), 6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի, 7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք, 8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինգրքույկ: Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ: Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչեւ հունիսի 17ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի: Մրցույթը տեղի կունենա հունիսի 19-ին՝ ժամը 14:00-ին, Կոտայքի մարզի Գեղարդի միջնակարգ դպրոցում: Տեղեկությունների համար զանգահարել՝ (093) 75-32-99 հեռախոսահամարով: